# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/4 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 28 | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Անձրևանոցն ունի երկկարանի ներկարված թևքեր, ծալովի օձիք և դարձածալ, օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Հետևամասին և առաջամասին մշակված են վրակարված կոկետկաներ: Առաջամասում մշակված են շերտիկով կողքի գրպաններ: Հետևամասն ունի միջնակար, որը նույնպես վերին կտրվածքով է` 2 կտորից, և ունի երկասեղանի զարդակար` ամբողջ եզրագծով: Անձրևանոցի օձիքը կտրված կանգունակով է: Ձախ առաջամասի աստառին մշակված է շերտիկով ծոցագրպան, որը կոճկվում է օդային օղակով և կոճակով: Անձրևանոցը կապվում է 4-4,5սմ լայնությամբ գոտիով, որն անցկացվում է կողքերի կարերում մշակված կամրջակների միջով: Գոտին կոճկվում է պլաստմասսայե ճարմանդով և գոտու վրա մշակված կամրջակով: Անձրևանոցը կոճկվում է մաքսային ծառայության խորհրդանիշ 5 կոճակօղակներով` գաղտնի կոճկվածքով: Լանջափեշի, օձիքի, գոտու, գրպանի, կոկետկաների եզրերը մշակված են 0.1-0.7 սմ լայնությամբ զուգահեռ զարդակարերով: Գաղտնի կոճկվածքը մշակվում է 6սմ լայնությամբ լայն զարդակարերով: Անձրևանոցի երեսացուն մուգ կապույտ գույնի գործվածքից է` անջրանցիկ` անձրևանոցային (210 գր. քառ. մետր խտությամբ, 51%բամբակ,49%Պ/Է): Աստառը` մետաքսյա, ԳՕՍՏ-2272-96 8-C5-ВШ արտիկուլի մուգ կապույտ գույնի կտորից: Ներդիրը մշակված է և ունի կոճակներով կոճկվող հանովի միջուկ` բրդյա |

| | | |
|---|---|---|
| | | գործվածքից: Ներքևի մասում ունի 20 սմ բացվածք: Ձախ թևին կարվում է մաքսային ծառայության տարբերանշանը, ուսերին՝ գոտեմակօղեր՝ ուսադիրների համար: Այլ պայմաններ. *Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը և տեսակավորումը իրականացնում է Կատարողը: **Չափսերը տրամադրվելու են պատվիրատուի կողմից: *** Կատարողը պետք է ունենա կտորների համապատասխան արտիկուլների հավաստագիր։ **** Ապրանքը պետք է լինի առանձին փաթեթավորված (կոշիկների յուրաքանչյուր զույգը առանձին արկղերով), յուրաքանչյուրի վրա տեսանելի գրված լինի չափսը (հասակը), ապրանքի և արտադրողի ամբողջական անվանումը: *****Ապրանքի վրա պետք է կարված լինի պիտակ, որի վրա նշված լինի արտադրողի անվանումը, կտորի բաղադրությունը, չափսը և այլն։ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/4 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 28 | | |